


Հայկական վաղ միջնադարյան ճարտարապետություն

Այստեղ կառուցվեց մի եկեղեցի՝ երկնավոր «Զվարթնոց» անվամբ, որը նշանակում է զվարթունների, կամ հրեշտակների բազմություն, որոնք երևացել են Սուրբ Գրիգորին տեսիլքի ժամանակ: Պատմիչ Մեբեոսի հիշատակությունն է Զվարթնոց տաճարի մասին: Մյուս բոլոր պատմիչները տաճարը հիշատակում են Սուրբ Գրիգոր անվամբ: Հեթանոսական Տիր Աստծուն նվիրված մեհյանի տեղում Զվարթնոցի տաճարը կառուցվել է 652 թվականին եւ կանգուն է մնացել երեք դար: Հզոր երկրաշարժի պատճառով խոնարհված կառույցը դարերի փոշու թակարդից միայն 20-րդ դարի սկզբին են սկսել ազատել:



Արվեստի բաժնի ամենշաբաթյա զեկույցների հերթական թեման զվարթնոցատիպ եկեղեցիների վաղ միջնադարյան ճարտարապետությունն էր: Զեկույցը լսելու էին եկել տարբեր բուհերի ուսանողներ, դասախոսներ, ընթերցողներ ու գրադարանի աշխատակիցներ: Զեկույցմանը զուգահեռ ցուցադրվեց նաեւ Արվեստի բաժնում պահվող թեմատիկ գրականություն:

«Քրիստոնեության ընդունումից հետո կառուցված պաշտամունքային շենքերը սկզբնական շրջանում դեռ շարունակում էին անտիկ ճարտարապետության ավանդները: IV-V դդ, դրանք



հիմնականում բազիլիկաներ էին՝ միանավ կամ եռանավ: Եռանավ բազիլիկ եկեղեցիների մի մասն ուներ արտաքին սյունասրահներ: Միանավ բազիլիկ եկեղեցիների աղոթասրահները ծածկված էին կիսաշրջանաձև քարե ծածկով՝ թաղով, և ամփոփված երկլանջ կտուրի տակ: Խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցիների նոր հորինվածք է դարաշրջանի ճարտարապետության գլուխգործոց Զվարթնոցը, որ կառուցել է Ներսես Գ Շինող Տայեցի

կաթողիկոսը՝ 641-661: Հայկական ճարտարապետությունը կրել է Զվարթնոցի ազդեցությունը. այն վաղմիջնադարյան հայկական շինարվեստի, քանդակագործության, դեկորատիվ արվեստի յուրօրինակ հանրագումար է»,- իր խոսքում նշեց զեկույցող, ենթաբաժնի վարիչ Հասմիկ Առաքելյանը:

Արվեստի բաժնի ընթերցասրահը բաց է ամեն օր, աշխատանքային օրերին մինչև ժամը 21.00, շաբաթ-կիրակի օրերին՝ մինչև 17.30: Արվեստին վերաբերող գրականությունը սպասարկվում է բաց դարակային սկզբունքով: Արվեստի տարբեր ոլորտներին վերաբերող ամենշաբաթյա զեկույցումների օրն ու ժամն անփոփոխ է՝ ամեն չորեքշաբթի, ժամը՝ 16.00: